

ԱՍՈՒՅԹԻ ՊԵՐԼՈԿՈՒՏԻՎ ԻՄԱՍՏԻ ԸՆԿԱԼՄԱՆ ԵՎ
ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՀ

Սույն հոդվածի նպատակն է քննության առնել համատեքստի դերը ասույթի պերլոկուտիվ իմաստը մեկնաբանելու գործում: Ինչպես գիտենք, պերլոկուցիան խոսքային ակտի իմաստային դաշտի բաղադրիչներից մեկն է, որի հաղորդակցական նպատակը խոսքի հասցեատիրոջ վրա որոշակի ազդեցություն գործելն է: Ի տարբերություն մյուս երկու իմաստային բաղադրիչների՝ լոկուտիվ և իլլոկուտիվ ակտերի, պերլոկուտիվ ակտի հաղորդակցական գործառույթը պայմանադրական հենքով չի իրագործվում: Այսինքն, լեզվի համակարգում չկան պերլոկուտիվ իմաստ արտահայտող հատուկ միջոցներ (ինչպես, օրինակ ստորոգման կամ իլլոկուտիվ իմաստ արտահայտող լեզվական նշաններ) (Austin 1962; Searle 1969): Այդ առումով էլ պերլոկուտիվ իմաստի գործաբանական քննությունը առաջին հերթին ենթադրում է համատեքստի և դրա տարրերի մեկնաբանություն:

Խոսքում պերլոկուտիվ ակտի գործառույթը բնորոշելու համար պետք է նախ և առաջ նշել, որ պերլոկուցիայի՝ խոսքի հասցեատիրոջ վրա առաջ բերած ազդեցությունը բնավ կանխատեսելի և կանխամտածված չէ խոսողի կողմից: Այսինքն, սովորաբար խոսողը նախապես (նույնիսկ մտովի) չի պլանավորում որևէ կոնկրետ ազդեցություն գործել խոսընկերոջ վրա՝ վախեցնել, զարմացնել, շփոթեցնել և այլն: Այսպես, ինչպես նշում է Ա. Շիֆրինը, "Don't shout" ասույթով խոսողն իրագործում է հրաման արտահայտող իլլոկուտիվ ակտ, որի ցանկալի պերլոկուտիվ ազդեցությունը կլինի խոսընկերոջն իրեն հնազանդեցնելը (Schiffrin 2005): Այդ դեպքում, խոսընկերը կհնազանդվի այսինքն, կդադարի գոռալ: Սակայն, վերոնշյալ ասույթը կարող է նաև այլ ազդեցություն թողնել ունկնդրի վրա, քանզի հնարավոր է, որ վերջինս բորբոքվի՝ սկսի է՛լ ավելի բարձր գոռալ, և կամ էլ խեղճանա, ներողություն խնդրի և այլն: Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ խոսողը չի կարող հստակ կանխորոշել իր կողմից արտաբերված ասույթի արդյունքում առաջացած պերլոկուտիվ ազդեցության բնույթը:

Լեզվագործաբանական շատ հետազոտություններում խոսվում է այն մասին, որ խոսքային ակտի իլլոկուտիվ և պերլոկուտիվ իմաստները որոշարկվում են համատեքստի միջոցով: Այսպես, քննելով ասույթի իլլոկուտիվ և պերլո-

կուտիվ իմաստների մեկնաբանության խնդիրը՝ վան Դեյքը գալիս է այն եզրահանգման, որ դրա համար խոսակիցները պետք է կիրառեն իրենց «լեզվագործաբանական ընկալման» (pragmatic comprehension) կարողությունը (van Dijk 1977): Այսպես, վան Դեյքը ասույթի իլլոկուտիվ և պերլոկուտիվ իմաստները մեկնաբանելու գործընթացը մի քանի փուլերի է բաժանում. ճիշտ ընկալել ասույթի բովանդակությունը, վերծանել դրան բնորոշ լեզվագործաբանական նրբերանգները, այնուհետև ասույթին վերաբերող սույն տեղեկությունը համապատասխանեցնել հաղորդակցման համատեքստին: Ընդ որում, վան Դեյքի համոզմամբ, գործաբանական համատեքստը հասարակական գործոններով պայմանավորված ստորակարգային համակարգ է, որն ընկալվում է հաղորդակցման մասնակիցների կողմից (van Dijk 1977): Այստեղ, իհարկե, կարևորվում է հաղորդակցման մասնակիցներից մեկի՝ ունկնդրի դերը: Ենթադրվում է, որ ասույթի իլլոկուտիվ, պերլոկուտիվ իմաստների ճիշտ ընկալումը պայմանավորված է համատեքստին բնորոշ այնպիսի գործոններով, ինչպիսիք են հաղորդակցման մասնակիցների շահերը, նրանց հաղորդակցական նպատակները, հաղորդակցման ոճը և այլն (van Dijk 1989):

Պետք է ասել, որ գործաբանության մեջ համատեքստի ուսումնասիրությունն ընթանում է մի քանի ուղղություններով: Այսպես, մի դեպքում քննության է առնվում խոսքային ակտերի և համատեքստի փոխհարաբերությունը (Goodwin & Duranti 1992 Garfinkel 1967), իսկ մեկ այլ դեպքում առաջնային է համարվում համատեքստի և հարատեքստի հարաբերակցությունը (ցուցայնությունը, գեղչումը, փոխարինումը, շաղկապները, վերաբերությունը, բառային միջոցների կրկնությունը և այլն) (Halliday & Hasan 1976; Levinson 1983; McCarthy 1991; Պարոնյան 2011):

Համատեքստին բնորոշ առանձնահատկությունների քննությունից պարզվում է, որ այն բավականին նեղ հասկացություն է և առնչվում է կոնկրետ տեքստին, դրանում կիրառված կապակցման միջոցներին, իսկ հարատեքստն ընդգրկում է տվյալ հաղորդակցական համատեքստի «հարող» հսկայական ներակա իմաստային մի դաշտ, որը կարևոր դեր ունի ասույթների գործաբանական իմաստը ճիշտ մեկնաբանելու գործում:

Հետազոտությունների մի խումբ էլ նպատակ ունի լուսաբանելու համատեքստին բնորոշ գծերը և դասակարգելու համատեքստի տեսակները:

Այսպես, Փ. Սուերը նշում է համատեքստի հետևյալ տեսակները. 1. լեզվական համատեքստ, 2. հանրային համատեքստ, 3. իրադրության համատեքստ (այսինիքն այն ֆիզիկական միջավայրը, որտեղ տեղի է ունենում հաղորդակցումը), 4. մասնակիցների հենքային գիտելիքները (ինչն իր մեջ չի

ներառում վերոնշյալ 1-3 գործոնները), 5. հաղորդակցման միջոցը (Auer 1992 p.91):

Ներկայումս գործաբանության մեջ ընդունված է մաս համատեքստի հետևյալ ստորաբաժանումը. իրադրային համատեքստ (*situational context*), հենքային գիտելիքի համատեքստ (*background knowledge context*) և հարատեքստային համատեքստ (*co-textual context*) (Cutting 2002 p. 55):

Իրադրային համատեքստը բնութագրվում է որպես խոսակիցներին շրջապատող ֆիզիկական աշխարհը, որտեղ տեղի է ունենում հաղորդակցումը. իսկ հենքային գիտելիքի համատեքստը ներառում է մշակութային և միջանձնյա հարաբերությունների տարրեր: (Cutting 2002)

Ընդ որում, մշակութային համատեքստը ենթադրում է նույն լեզվական համայնքին վերաբերող հենքային գիտելիքի առկայություն (Sperber & Wilson 1995), իսկ միջանձնյա համատեքստն իր մեջ ներառում է խոսակիցների միջանձնյա հարաբերություններին, նրանց անձին բնորոշ անհատական հատկանիշներին վերաբերող հենքային գիտելիք (Cutting 2002):

Ուսումնասիրելով տեքստի և համատեքստի փոխհարաբերության խնդիրը՝ Փ. Սուերը մատնանշում է երկու տեսական մոտեցում: Այսպես, կառուցվածքային մեկնաբանության կողմնակիցները տեքստը դիտում են որպես ինքնուրույն, անկախ միավոր, որն ունի իրեն բնորոշ համակարգային տարրեր, կապակցման միջոցներ: (Halliday & Hasan 1976)

Սրան հակառակ, մարդալեզվաբանական և էթնոլեզվաբանական ուղղությունների կողմնակիցները պնդում են, որ հաղորդակցման գործընթացը հենվում է համատեքստի վրա և, ըստ այդմ, հաղորդակցումն ու համատեքստը հարաշարժ բնույթ ունեն և մեկը մյուսին մշտապես լրացնում են: Այսպիսով, ինչպես տեսնում ենք սույն տեսության մեջ հաղորդակցման գործընթացը մեկնաբանվում է առկա համատեքստի միջոցով, իսկ համատեքստային կադապարները հաղորդակցման գործընթացի փոփոխություններին զուգահեռ անընդհատ վերադասավորվում են: Ջ. Գամփերը վերոնշյալ գործընթացն անվանում է խոսքային գործունեության համատեքստայնացում (*contextualization*) (Gumperz 1982; Auer & Di Luzio 1992):

Համատեքստի քննությունը մեզ բերում է այն համոզման, որ այն կարևոր հենք է խոսքային գործունեության համար: Ըստ որում, լեզվական և արտալեզվական համատեքստի (*co-text context*) տարրերը ոչ միայն նպաստում են դիսկուրսի կառուցվածքային և իմաստային դաշտերի համապատասխան մեկնաբանությանը (Widowson 2004; Պարոնյան 2011), այլև խոսընթացում

ներգրավված իմաստային ենթադաշտերի, տվյալ դեպքում՝ պերլոկուտիվ իմաստի, ապակողավորմանը խոսքի հասցեատիրոջ կողմից:

Այժմ ժամանակակից անգլիական և ամերիկյան գրականությունից քաղված երկխոսական միավորների նմուշների քննությամբ ցույց տանք, թե ինչպես է լսողը կամ ընթերցողը համատեքստի տարրերի իմացության շնորհիվ կարողանում ճիշտ մեկնաբանել խոսողի կատարած պերլոկուտիվ ակտի իմաստը: Հետևյալ երկխոսական միավորում խոսընկերները ազգակիցներ են, որոնք ունեն համատեղ կենսափորձ և, ըստ այդմ համատեղ հենքային գիտելիքների մեծ պաշար: Հետևաբար գրույցի ժամանակ նրանք տեղեկության մի մեծ հատված միտումնավոր բաց են թողնում և չեն ասում՝ ենթադրելով, որ խոսընկերը ի վիճակի է լրացնելու տեղեկատվական այդ բացը: Հենքային գիտելիքի ներակայման այդ ձևը գործաբանության մեջ հայտնի է որպես կանխենթադրույթ:

REG: Ah-ha, the great caterpillar hunt is on.

ANNIE: No it isn't. I washed the lettuce this time.

REG: Oh yes.

ANNIE: Well, I rinsed it under the tap. Twice.

REG: What I always say about salads, Annie, is that I may not enjoy eating them but I learn an awful lot about insect biology. My appreciation of the anatomy of an earwig has increased enormously ...

A. Ayckbourn "Norman Conquest" p.39

Սույն երկխոսությունը տեղի ունենում սեղանի շուրջ, ուտելիս: Առաջին հայացքից կարող է թվալ, որ **"Ah-ha, the great caterpillar hunt is on"** ասույթը հաստատական խոսքային ակտի գործառույթ է կատարում, որի նպատակն է հաստատել որևէ փաստի իսկությունը: Սակայն խոսընկերոջ պատասխանը մեզ կասկածի տեղիք է տալիս: Վերջինս նախ ժխտում է տվյալ փաստի իսկությունը՝ **"No it isn't,"** ապա կազմում մի հաստատական ասույթ, որն իր իմաստով չի կապվում նախորդի հետ՝ **"I washed the lettuce this time"**: Եթե չհենվենք համատեքստի վրա և չկիրառենք գործաբանական կանխենթադրույթին առնչվող մեր հենքային գիտելիքը, ապա դժվար կլինի սույն երկխոսության իմաստը հասկանալ: Նախ ասենք, որ խոսընկերները ենի պատրաստած հազարով աղցանն են ուտում, և թվում է, թե տվյալ դեպքում թրթուրի որսի հիշատակությունն անիմաստ է: Այսինքն, աղցան ուտելիս արտաբերված սույն ասույթի իլլոկուտիվ և պերլոկուտիվ նպատակները անհասկանալի են մնում, քանի դեռ չենք անդրադառնում պատասխան խոսքին, որտեղ ենին պնդում է, որ լվացել է հազարը: Պարզ է դառնում, որ այստեղ խոսքը գնում է աղցան պատրաստելու համար օգտագործված կանաչիի մաքրության և ըստ այդմ՝ ենիի մաքրասիրության

մասին: Ըստ որում, **"this time"** ժամանակի պարագայի միջոցով այն գոյաբանական կանխենթադրույթն է ներակայվում, որ ենին նախորդ անգամ չէր լվացել կանաչին: Այստեղից տրամաբանորեն եզրակացնում ենք, որ նախորդ անգամ աղցան պատրաստելիս հազարը լվացած չի եղել, և աղցանում թրթուրներ են հայտնվել: Ռեզը ենթադրում է, որ այս անգամ նույնպես թրթուրներ կհայտնվեն, քանի որ ենին փնթի է: Ինչպես պարզվում է, իրականում, սույն երկխոսական միավորը սկսող ասույթը ոչ թե հաստատական խոսքային ակտ է, այլ անուղղակի բողոք. ենին կանաչին չի լվանում և աղցանում թրթուրներ են հայտնվում: Համատեքստի այս մեկնաբանությունից պարզ է դառնում նաև սույն ասույթի պերլոկուտիվ իմաստը, այն է՝ քննադատություն. Ռեզը պարսավում է ենիին նրա փնթիության համար:

Հետևյալ երկխոսության մեջ զրուցակիցները ամուսիններ են, և արտաբերված խոսքի թերացումները նրանց չեն խանգարում ճիշտ մեկնաբանելու խոսքային ակտի գործարանական իմաստը, քանի որ նրանք համատեղ հենքային գիտելիքների հարուստ պաշար ունեն:

George: {Takes her drink} I always put ice in your drink. You eat it, that's all. **It's that habit you have ... chewing your ice cubes ... like a cocker spaniel. You'll crack your big teeth.**

Martha: **THEY'RE MY BIG TEETH!**

George: **Some of them ... some of them.**

Martha: I've got more teeth than you've got.

George: Two more.

Martha: Well, two more's a lot more

George: I suppose it is. I suppose it's pretty remarkable ... considering how old you are.

E. Albee "Who's Afraid of Virginia Woolf" p.13

Ջորջը նյարդայնանում է, որ ամեն անգամ, երբ ինքը Մարթայի խմիչքի մեջ սառույց է գցում, նա կծում ուտում է սառույցը և նորն է պահանջում: Իրականում Ջորջն անուղղակի նախազգուշացում է արտահայտում՝ Մարթային տեղյակ պահելով այն վատ հետևանքների մասին, որոնք սպասվում են նրան **"You'll crack your big teeth"**: Պերլոկուտիվ մակարդակի հայեցակերպով դիտելիս սույն խոսքային գործունեությունը քննադատություն է. իր կնոջը շան հետ համեմատելը ակնարկում է Ջորջի բացասական դիրքորոշման մասին՝ շան պես ատամներով սառույց ծամելը լավ սովորություն չէ. **"It's that habit you have ... chewing your ice cubes ... like a cocker spaniel"**: Հնարավոր բացասական հետևանքները մատնանշող նախազգուշացման անուղղակի խոսքային ակտում Մարթային քննադատելով՝ խոսողը նաև ծաղրում է նրան մեծ ատամներ ունե-

նալու համար: Ինչ խոսք, Մարթան հասկանում է ամուսնու քննադատությունն ու ծաղրը և հակադարձում է նրան **"THEY'RE MY BIG TEETH!"** հուզարտահայտչական խոսքային ակտով՝ բողոքելով ամուսնու քննադատության դեմ: Ինչպես տեսնում ենք, խոսքը կերպով արձագանքը վերաբերում է նախորդ ասույթի պերլոկուտիվ և ոչ թե իլլոկուտիվ ակտին: Պերլոկուտիվ մակարդակում Մարթայի պատասխան խոսքի հաղորդակցական իմաստը զայրույթն է. նրան զայրացնում է ամուսնու քննադատությունը, և նա բղավելով է արձագանքում՝ ի ցույց դնելով իր բացասական հույզերը: Պետք է ասել, որ Մարթայի ծայնի բարձրության և ասույթի հուզական հնչեղանգի մասին վկայում է նաև հեղինակի նշագրությունը՝ մեծատառերը և բացականչական նշանը ցույց են տալիս, որ խոսողը գոռում է:

Շարունակելով մեր քննությունը՝ նշենք, որ պակաս հետաքրքիր չէ Ջորջի արձագանքը Մարթայի բողոք զայրույթին. **"Some of them ... some of them"**: Ակնհայտ է, որ Ջորջն իրեն հանգիստ է պահում և չի «վարակվում» Մարթայի կրքոտ հակամարտ կեցվածքից: Նա հանդարտ, դադար տալով՝ **"Some of them ... some of them"** գեղչված ասույթ է կազմում, որի իլլոկուտիվ նպատակը անհամաձայնությունն է: Որպես պերլոկուտիվ գործողություն սույն խոսքային ակտը արտահայտում է քննադատություն՝ սարկազմով: Այստեղ սարկազմի պատճառն այն է, որ Ջորջը գիտի Մարթայի արհեստական ատամների մասին և ծաղրում է նրան:

Այսպիսով, մեր կատարած հետազոտությունը թույլ է տալիս եզրակացնել, որ արտալեզվական գործոնները, մասնավորապես, համատեքստային կադապրները որոշիչ դեր են խաղում ասույթի պերլոկուտիվ իմաստը ապակողավորելու գործում: Այսպես, երկխոսական միավորների քննությունը մեզ թույլ տալիս զալ այն համոզման. որ սույն երկխոսական միավորների համատեքստային և հարատեքստային տարրերի մեկնաբանության շնորհիվ է, որ խոսակցին հաջողվում է, ընկալել խոսողի՝ առաջին հայացքից անտեսանելի թվացող իրական հաղորդակցական նպատակը: Գրավոր խոսքին բնորոշ առանձնահատկություններն ուսումնասիրելիս անհրաժեշտ է մեծ ուշադրություն դարձնել հեղինակի մեկնական ասույթներին, փակագծում արված նշագրումներին, քանզի դրանք նույնպես նպաստում են ասույթի պերլոկուտիվ իմաստի մեկնաբանությանը: Երկխոսական միավորների քննությունը ցույց է տալիս, որ պերլոկուցիան բարդ և անկանխատեսելի իմաստային կարգ է, որի ընկալումը և մեկնաբանումը պարտադրում է որոշակի հենքային գիտելիքի ակտիվացում և առկա հաղորդակցական իրադրության համար համապատասխան համատեքստային կադապրների կիրառություն:

Գրականություն

1. P. Auer & A. Di Luzio. The contextualization of language. John Benjamins Eds, 1992.
2. J. L. Austin "How to Do Things with Words" Oxford University Press, 1962
3. T. A. van Dijk "Text and Context, Explorations in the Semantics and Pragmatics of Discourse" London: Longmans, 1977
4. J. Cutting "Pragmatics and Discourse: A Resource Book for Students" Florence, KY, USA: Routledge, 2002
5. H. Garfinkel "Studies in Ethnomethodology" Prentice Hall, 1967
6. C. Goodwin & A. Duranti " Rethinking context: an introduction" A. Duranti & C. Goodwin (Eds), 1992
7. J. Gumperz "Discourse Strategies" Cambridge University Press, 1982
8. M. Halliday & R. Hasan "Cohesion in English" London, Longman, 1976
9. S. Levinson "Pragmatics" Cambridge, Cambridge University press, 1983
10. M. McCarthy "Discourse Analysis for Language Teachers" Cambridge, Cambridge University Press, 1991
11. Schiffrin "Modelling Speech Acts in Conversational Discourse" the University of Leeds School of Computing 2005
12. J. R. Searle "Speech Acts, an Essay in the Philosophy of Language" Cambridge at the University Press, 1969
13. H. Widdowson " Text, Context, Pretext. Critical Issues in Discourse Analysis" New York. Blackwell Publishing, 2004
14. D. Wilson & D. Sperber "Relevance" Oxford, Basil Blackwell, 1995
15. Շ. Պարոնյան, Լեզվաճանաչողություն և Դիսկուրս Երևան ԵՊՀ Հրատարակչություն, 2011
16. Т. А. ван Дейк. Язык. Познание. Коммуникация Москва, Прогресс, 1989
17. E. Albee "Who's Afraid of Virginia Woolf" Penguin Books, 1965
18. A. Ayckbourn "The Norman Conquest" Chatoo & Windus, 1975

Perlocution is one of the semantic constituents of the speech act which aims at bringing about certain effects on the hearers. The fact that unlike locutionary and illocutionary acts perlocution is non-conventional, makes it difficult to decode the nature of the intended perlocutionary effect. The author of the article claims that context is the main perlocutionary force indicator. The analysis of the factual material comes to prove that the interpretation of the intended perlocutionary force is conditioned by a number of contextual factors, such as the participants' communicative goals, manner of communication, mutual background knowledge, etc.